սար ընդ նոսա։ և 'ի մեռանիլ Հապէշ երիցու միոյ՝ Հայք կատարեցին զյուղարկաւորութիւն նորին ըստ ծիսի եկեղեցւոյն Հայոց, եւ թաղեցին 'ի գերեզմանատունս իւրեանց (1652)։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Բաժանումն այրին Ծննդեան 'ի մէջ Հայոց և Յունաց։ կախումն կանթեղաց։ Գործ Եղիազարու։ Վէճ Յունաց ընդ Հայս։ և վերսին գրաւելոյ նոցա զվիճակն Հապէշաց։ սեպհականութիւնք Հապէշաց։ Տագնապ Եղիազարու։ Նուիրակութիւն Ս. Էջմիածնի։ Գրաւումն Ս. Յակոբայ 'ի Յունաց։

ՅԵՏ գրաւելոյ Եղիազարու զբանալի այրին Ծննդեան, եղ 'ի մտի սահմանել նաեւ զժամ պատարագի և պաշտաման Հայոց անդ, բայց խորհէր թէ ո՛րպէս հնարեսցի կարգաւորել եւ զետեղել զկանթեղունս յԱյրին, զորս բարձեալ էին յառաջագոյն Լատինք՝ և Յոյնք։ Եւ մինչ նա յայսմ խորհրդի էր, եկն յԵրուսաղէմ յաւուրսն յայնոսիկ Բդեշխն Գազայու Հիւսէին Փաշայ, զնացին առ նա փոխանորդն Յունաց եւ Եղիազար վարդապետ, եւ միջնորդութեամբ նորին հաշտեցան ընդ միմեանս, և եղեւ խաղաղութիւն առ ժամն։ ապա հաւանութեամբ երկուց ազգաց սահմանեցաւ որոշել զսպասահարկութիւն Այրին Բեթղեհէմի յերիս բաժինս 'ի մէջ երկուց ազգաց։ ըստ երից դրանց Այրին, որք են 'ի հարաւ՝ 'ի հիւսիս եւ յարեւմուտս, որ փակեալ կայր յայնժամ։ երկու բաժինն ընդ Ծննդեան տեղւոյն լինել՝ Յունաց, և մի բաժինն ընդ Մարոյ տեղւոյն՝ մնալ 'ի ձեռս Հայոց։ ունիլ Յունաց կանթեղս 42։ որպէս կախեալ էին յիւրաքանչիւր տեղիս։ կախել Հայոց եւս կանթեղս 21։ Յունաց կատարել զպատարագն եւ զպաշտամունս իւրեանց 'ի վերայ Ծննդեան տեղւոյն, և Հայոց 'ի վերայ տեղւոյն Մարոյ։ Հարաւային դուռն և բանալի նորին մնալ 'ի ձեռս Յունաց և դնել զմի դռնապան 'ի միաբանից նոցին։ Դուռն հիւսիսային և